ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՅ ՖԱՇԻՍՏՆԵՐԸ

Գրեց՝ ՍԱՀԱԿ ՁԹՉԵԱՆ

Գ.

Ռամկավարներ — Դաշնակցութեան փաշիզմի մէջ մեղադրողների շարքում կանգնած են նաեւ հայ Ռամկավար հէֆերը:

Ռամկավարները հայկական կեանքում հասարակական մաքի աջ, պահպանողական թեւն են ներկայացնում: Առ հասարակ ներ կայացնում են կապիտալիստական դեմոկրասին, հիմնուած ազգների և դղերականների տիրապետութեան, դաղափարարանութեան վրայ: Նրանք ոչ հնդկական միաք չունեն, այլ բաղմատեսակ մաքերի մի խառնուրդ են ներկայացնում: Կուսակցութեան դաղանի և վերին խաւերը «Վարդանանց Սպասեներ»ն են, որոնք կուսակցութիւնը վարում են, ինչպէս որ կը կամենան: Այն փոքրիկ թութակները, որոնք թառած են Ֆրեզնոյում բոլշեւիզմի ճիշն են բարձրացնում, կը ընդունուեն, երբ կը կամենան վերնախաւերը: Եւ ես վստահ եմ մի օր վերնախաւերն այդ կ'անեն:

Սրանք ֆաշիստ չեն, այլ ազատ սոցիալիստական դեմոկրասիի հակառակորդներ են: Հայ ռամկավարներին կարելի է դասել Արմենեանի հակառակորդ «Սպասպուրականի «Ապոդոսեաններին» եւ կամ թէ՝ Նալբանդեանցի ճաղկած՝ «Այլազանդեանակներ»ի շարքում: Լինելով ընկերային — տնտեսական դաղափարարանութեամբ հակասոցիալիստ՝ նրանք կարող են մի օր—եթէ, Տէրը մի արասցէ, մեր պետութիւնը դառնայ տոտալիտէրեան համատիրական)— շատ հեշտ կերպով միանալ ֆաշիստական մի պետութեան կառքին...

Ռամկավարները զուրկ լինելով գաղափարական հիմունքներից՝ չեն կարող Դաշնակցութեան մեղադրել ֆաշիզմի մէջ: Բայց տեսնենք թէ «համագործակցութեան» վերաբերմամ՞բ նրանք որքան հիմնաւոր են իրենց զրպարտութիւնների մէջ:

Եթէ դաշնակցական Դրոն նացիների Հայաստան ներխուժման օրերում լեզու է դտել նացիզմի հետ Հայաստան մտնելու և սանձելու Թրքական ներխուժող ոյժերի վայրագութիւնները, ապա ի՞նչ անուն տալ Զորանեան-Բաշալեան ռամկավար հէֆերին, երբ նրանք էլ համագործակցութեան լեզու էին դտել անգլո-ֆրանսական ներխուժող ոյժերի հետ Հայաստան մտնելու՝ 1940-ին...

Ռամկավար հէֆերը, Ամերիկայում նստած,, ազատուելու, չքմեղանալու ոչ մի միջոց չունեն: Եթէ Դրոն ենրա կուսակցութիւնը դաւաճան են, դաւաճան է նաեւ Զորանեանը, և իր ռամկավարական կուսակցութիւնը: Երկու չափ և երկու կշիռ չէ կարող դոյութիւն ունենալ ունենալ: Նրա հէֆերը լաւ կ'անեն, որ իրենց հէֆերը լաւ կ'անեն, որ իրենց աչքի դերաններն էլ տեսնեն: Մենք ի հարկէ այդ չենք պահանջի «Նոր Օր»ի փոքրիկ թութակից, որ թութակի նման միայն վար նայել և ճահիճներ տեսնել դիտէ...

3. Հնչակեանները — «Հայ Ազդային Խորհուրդ»ի սրբազան դաշնակցութեան երրորդ անդամն է հին վեսարթեան Հնչակեան Կուսակցութիւնը, որ դեռ ևս ապրում է...

Ապրողներն՝ էլ կուսակցութիւն չեն, այլ հին Հնչակեան կուսակցութեան մնացորդներն են, որոնք առաջները սոցիալիստներ էին, 1905-ին դարձան «Սոցիալ Դեմոկրատ», և այժմս էլ տարուբերուում են «Սոցիալ - Դեմոկրատիզմի» և բոլշեւիզմի միջև: Կանդ է առել սրանց մամուլը և դրականութիւնը, մի կամ երկու փոքրածաւալ թերթեր ընկերների զոհաբերութեամբ, — ահա թէ ինչ է ներկայացնում Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը ներկայ օրերում...

Սրանք բոլշեւիզմի տիրապետութիւնից յետոյ՝ մի քանի անգամ լուծուել են, և մի քանի անգամ նորից վերակազմուել: Մի օր հարիւր տոկոսով «կոմունիստ» են, և միւս օրն էլ հարիւր տոկոսով «Սոցիալ Դեմոկրատ». Նրանք Լենինի հետ համաձայն են, որ «Սոցիալ - Դեմոկրատիզմի» հիմնադիր Կարլ Կաուցկին հակամարքսիստ մի ուընեգէյդ (հաւատուրաց) է, բայց էլի մնում են սոցիալ-դեմոկրատ: Նրանք Եւրոպայի «Սոցիալ Դեմոկրատիզմի» հետ են, բայց փառաբանում են բոլշեւիկեան սոցիալիզմը: Նրանք հակառակորդ են Նիւ Եորքում բոյն դրած հայ բոլշեւիկներին, նրանց խաբեբայ և դաւաղիր են անուանում, բայց էլի դեկավարուում են նրանց ցուցմունքներով:

Մտել են Ամերիկայի «Հայ Ազդային Խորհուրդ»ի մէջ՝ իրենք իրենց հայ քաղաքական կեանքում մի ոյժ ներկայացնելու, շարքերը վառ ու կանդուն պահելու համար: Եւ սրանք էլ Դաշնակցութեան մեղադրում են ֆաշիզմի մէջ:

Ես վստահ եմ, որ Սէլեանի գէնգը վաղը յետ կը դառնայ եւ հնչակեան ուղեկիցներին (Ֆէլլօ Թրէվելեր) էլ ֆաշիստ կ'անուանի, և դրա համար ես խոնարհաբար խորհուրդ կը տայի նրանց մի կողմ ձդել «Ս. Դ.» մակդիրները և վերանուանուել «Կոմ (կոմունիստ) Հնչակեան Կուսակցութիւն»...

Սակայն այս բոլորից յետոյ՝ հետաքրքիր կը լինի տեսնել թէ Ամերիկայի «Հայ Ազդային Խորհուրդ»ը կազմող երրորդութիւնը, ինքն իր մէջ, ո՛րքան համերաշխ է ոգով, և գործով...

2. Համերաշխ ոգի.— Ամերիկայի «Հայ Ազդային Խորհուրդ»ը կազմող սրբազան երրորդութեան վոխյարաբերութեան վերջին 25-ամեայ պատմութիւնը տալիս է նրանց քաղաքական վարքաղիծը:

Քրքրեցէք ռամկավար և հնչակ կուսակցութիւնների թերթերի («Պայքար» և «Երիտ. Հայաստան») համարները, և դուք պիտի տեսնէք, որ մի լայն անջրպետ կայ այդ հոսանքների միջև, որ նրանք մտքով, ոգով և գործով հակառակորդներ են եղել և անվերջ լուսանքներ են թափել Նիւ Եորքում որջացած հայ բոլշեւիկների հասցէին՝ վերջին 25 տարիների ընթացքում:

Իմ վերև նշած հայ բոլշեւիկների վարքաղիծը մի շատ թեթև ուրուագիծ է միայն, այն դաւաղրական, խաբեբայ և կռուարար ընթացքին, որ ռամկավար - հնչակ թերթերը վերադրել են իրենց այսօրուայ դաշնակցին՝ հայ բոլշեւիկ խմբակի հասցէին:

Ռամկավար օրգանը հայ բոլշեւիկներին անուանում է — անվրդովելի, կռուարար, ոգէտ, նացիզմին կողմնակից և ամերիկեան պետութեան դէմ դաւաղրող: Եւ տալիս է փաստեր հայ բոլշեւիկների մամուլից, հրապարակային յայտարարութիւններից և բրոշիւրներից:

Իսկ հնչակեան մամուլն՝ Աստուա՛ծ իմ, ինչեր չէ ասել իր այսօրուայ բոլշեւիկ դաշնակիցների մասին:

Հնչակեան մամուլը և նրանց դեկավար ընկերները վերջին 25 տարիների ընթացքում՝ իրենց այսօրուայ բոլշեւիկ դաշնակիցներին անուանել են — դաւաղիր,

(Շար. տես Բ. էջ)

ASPAREZ | November 23, 1945

Ո՞Վ ՔԵՐ ԵՆ ՀԱՅ ՖԱՇԻՍՏՆԵՐԸ

(Առաջին էջէն)

հակայեղափոխական, զեղծարար, գաղթականական դրամները կը-լլոգ, և չգիտմ դեռ ևս ինչ աննե-ռելի յանցանքներով թաթախուած և ծանրաբեռնուած: Դեռ երէկ «Երիտ. Հայաստան»ը հրապա-րակով մեղադրում էր Սէլիմն գէնգին, որ նա խարեբայութեամբ իրենց ընկեր Սիրվարդին յետ է պահել Հայաստան մեկնելուց:

Պաշտօնական եւ մամուլում յայտնաբերուած իմ վերև նշած մտքերից յետոյ՝ մօտեցէք այս օ-րերի «Հայ Ազգային Խորհուրդ» կազմող ռամկավար և հնչակ ըն-կերներին և հարց տուէք — ի՞նչ-պէս են գնում ձեր գործերը, հա-մերա՞շխ էք հոգով և գործով, եւ դուք իսկոյն կը լսէք միանուագ դժգոհութիւն: Նրանք ձեզ փսփը-ռում են, որ հայ բոլշեւիկները անվստահելի և խարեբայ արա-բածներ են, բայց քաղաքական այս պայմաններում՝ պէտք է շա-բունակել միասին գործելը...

3. Ի՞նչ է նրանց գործը.— Երբ «Հայ Ազգային Խորհուրդ»ը հրա-պարակ իջաւ, նա յայտարարեց ի լուր ամերիկահայութեան, որ այդ մարմինը կազմուել է — 1) աջակցելու Ամերիկայի պատե-րազմական ջանքերին, 2) կանգ-նելու Սովիետ Հայաստանի կողքին, և 3) օժանդակելու ներզաղ-թին...

Վերև նշած 3 նշանաբաններն էլ համահայկական են, և համա-զգաղութային, որանց շուրջը ամ-բողջ ամերիկահայութիւնը կա-րող էր միանալ և մի ճակատ կազ-մել: Բայց այդ միութիւնը շի-րականացաւ շնորհիւ հայ բոլշե-վիկների դաւադրական աշխա-տանքներին, շնորհիւ ռամկավար-հնչակ կամակատարութեան, որ հոմանիշ է դարձել հայ բոլշե-վիկներին ատրուկ դառնալուն:

Եթէ ռատալիտէր (համատիրա-կան) հայ բոլշեւիկները չեն ցան-կանում համագործակցել Դաշ-նակցութեան հետ, որոնք քննա-դատում են բոլշեւիզմը և ռատա-լիտերիզմը, նրանք հետեւողական են, որովհետև նրանք հաւատում են մի կուսակցութեան դիկտա-տորութեան: Սակայն ի՞նչ ասել ռամկավար - հնչակ շէֆերին...

Ռամկավար - հնչակ հոսանքնե-րը հաւատում են պարլամենտա-րիզմին, բոլոր կուսակցութիւն-ների գոյութեան, մարդկային 4 ազատութիւններին, որոնց նոյն-պէս հաւատում է Դաշնակցու-թիւնը:

Ազատ, դեմոկրատիկ Ամերիկա-յում Դաշնակցութիւնը պաշտպա-նում է մարդ անհատի ընկերա-յին բոլոր ազատութիւնները: Բոլ-շեւիկները հակառակ են դրան: Ռամկավար - հնչակները լռել-եալն լծուել են բոլշեւիկեան կառքին: Ո՞վ է դատապարտելի, Դաշնակցութի՞ւնը, թէ բոլշեւիկ-ների խամաճիկները: Կասկած չը-կայ, որ պատմութեան սրդաբ-ացումը Դաշնակցութեան հետն է...

Որպէս հարազատ թարգման հայ ժողովուրդի հոգեկան ապ-րումներին և ձգտումներին՝ այս օրերում ոչ մի հակառակութիւն դէմ չունի հայ հոսանքների միջև, ուրեմն և պիտի ակնկալ-ուէր միացեալ գործունէութիւն նրանց միջև: Եւ շնորհիւ հայ բոլ-շեւիկներին՝ այդ չեղաւ: Դաշ-նակցութիւնը կշռելով յետ պա-տերազմեան դրութիւնն միայնակ անցաւ գործի, հետաքրքրելու «Հայ Դատը» պատերազմից յետոյ:

Դաշնակցութիւնը սկսեց «Հայ Դատ»ի հանգանակութեան: «Ազգ. Խորհուրդ»ը,, և մասնաւորապէս